

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻՑ ՁԵՌՔ
ԲԵՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

N- 4

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի առաջին մասի 2012 թվականի հունվարի 1-ից գործող խմբագրության համաձայն՝

«Թղթային կամ էլեկտրոնային հարկային հաշվում պարտադիր նշվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներով նախատեսված տվյալները.

2) ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը՝ առանձին տողով.

3) հարկային հաշվի սերիան ու համարը.

4) ԱԱՀ վճարողի հաշվառման համարը:

Ալցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարման դեպքում հարկային հաշվում առանձնացվում է նաև ակցիզային հարկի գումարը:»:

Հարկային հաշիվներում պարտադիր լրացման ենթակա ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարները կիրառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» N 1104-Ն որոշմամբ՝ 2012 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Հարկային մարմնից հարկային հաշիվների ձևերի ձեռքբերման գինը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» N 1630-Ն որոշմամբ սահմանված է հարկային հաշիվների ձևերի ձեռքբերման գինը: Այդ որոշման համաձայն 2011 թվականի ընթացքում ձեռք բերված և 2012 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի մեկը ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի մեկ էջի գինը 10 դրամ է:

Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 27-ը հարկային մարմնից ձեռք բերված հարկային հաշիվների ձևերում բացակայել է «ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը» տողը՝ օրենքով համապատասխան պահանջ սահմանված չլինելու հիմքով: 2011 թվականի դեկտեմբերի 27-ից հետո հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերը լրացվել են «ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը» տողով:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով՝ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների հետ կապված հարկ վճարողների համար լրացուցիչ ծախսերի կատարման համար պայմաններ չստեղծելու նկատառումով, պաշտոնապես պարզաբանում են.

Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 27-ը հարկային մարմնից ձեռք բերված այն հարկային հաշիվների ձևերը, որոնցում բացակայում է «ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը» տողը, մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1630-Ն որոշման 2.3-րդ կետով սահմանված ժամկետը՝ մինչև 2012 թվականի հունիսի 30-ը ներառյալ, կարող են օգտագործվել կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերի կողմից՝ «հարկ վճարողի հաշվառման համարը» տողի վերջին (ծախից՝ աջ) վանդակից հետո լրացնելով «/» նշանը և «1» թվանշանը:

Համաձայնեցված է

ՀՀ Ֆինանսների նախարարության հետ

Վ. Գաբրիելյան

13 փետրվարի 2012 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ

Գ. Խաչատրյան

3 փետրվարի 2012 թ.